Եղեգնաձորի թիվ 2 հիմնական դպրոց

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա – Հայկական հարցի ծագումն ու բովանդակությունը

Ուսուցիչ – Մարինե Հովհաննիսյան

Դպրոց – Շատինի միջն.

Խումբ – Պատմություն

Խմբի ղեկավար – Ռուզաննա Բարսեղյան

Եղեգնաձոր 2022 թ.

1. ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅՈՑ ՊԱՏՄԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԳՈՅՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ՏԵՍԱԿԵՏՆԵՐ:

2. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ:

3. ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ՍԿԶԲՆԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՓՈՒԼԵՐԻ ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ :

4. ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ՝ ԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՐՑԻ ԲԱՂԿԱՑՈՒՑԻՉ ՄԱՍ:

5. ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ ՍԱՆ-ՍՏԵՖԱՆՈՅԻ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ:

6. ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄԸ: ԲԵՌԼԻՆԻ ԿՈՆԳՐԵՍԸ:

7. ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ԼՈՒԾՄԱՆ ՀԱՄԻԴՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ 1890-ԱԿԱՆ ԹԹ:

8. ՑԱՐԻԶՄԻ ԳԱՂՈՒԹԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԿՈՎԿԱՍՈՒՄ՝ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ՄԻ ՆՈՐ ԿՆՃԻՌ:

9. ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԱՑՈՒՄԸ 1912-1914 ԹԹ:

10. ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ ԱՌԱՋԻՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ: ՀԱՅՈՑ ՄԵԾ ԵՂԵՌՆԸ:

11. ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ 1917 Թ. ՌՈՒՍԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՐՋԱՆՈՒՄ:

12. ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ 1918-1920 ԹԹ (ՍԵՎՐԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ):

13. ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿՈՐՈՒՍՏՆԵՐԸ 1921 Թ: ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ԱՆԲԱՐԵՆՊԱՍՏ ԼՈՒԾՈՒՄՆԵՐԸ:

14. ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ ԼՈՆԴՈՆԻ ԵՎ ԼՈԶԱՆԻ ԿՈՆՖԵՐԱՆՍՆԵՐՈՒՄ:

15. ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ ՊՈՏՍԴԱՄԻ ԿՈՆՖԵՐԱՆՍՈՒՄ:

16. ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ ԱՐԴԻ ՓՈՒԼՈՒՄ: ԱՐՑԱԽՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ՝ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ՆՈՐ ՓՈՒԼԻ ՄԵԿՆԱԿԵՏ:

17. ՀԱՅՈՑ ՊԱՀԱՆՋԱՏԻՐՈՒԹՅՈՒՆԸ, ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ:

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ՄԱՍԻՆ ՊԱՏՄԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԳՈՅՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ՏԵՍԱԿԵՏՆԵՐ

«ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑ» - թուրքական լծից արևմտահայության ազատագրաման, հայ ժողովրդի ինքնորոշման ու սեփական պետականություն ստեղծելու համար մղված պայքարի անվանումը դիվանագիտության պատմության մեջ; Ասպարեզ է իջել և արևելյան հարցի բաղկացուցիչ մաս է դարձել 19-րդ դարի 70-ական թթ. 1877-78 ռուս-թուրքական պատերազմից հետո; Ջ. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ, Հայկական Սովետական հանրագիտարան հատոր 6:

ԼԵՈ. Հայկական հարցի վավերագրերը

« Հայոց հարցը նույնքան հին է, որքան ինքը՝ հայ ազգը: Քրիստոսից վեց դար առաջ էր, որ հայ ազգը դուրս եկավ խավարի անհայտությունից պատմության լուսավոր ասպարեզ, և հենց այդ առաջին քայլերի հետ նա անհայտության մութից լույս է բերում իր ազգային գոյությունը պահպանելու մեծ հոգսը: Իսկ հայոց հարցը, ինչպես գիտեք ամենքդ, հայ ժողովրդի ազգային գոյության հարցն է: Այսպիսով, հայոց հարցի պատմությունը հայ ազգի պատմությունն է՝ սկզբից մինչև մեր օրերը»: ԼԵՈ. «Թուրքահայ հեղափոխության գաղափարախոսությունը», հատոր Ա:

ԼԵՆԴՐՈՒԾ ԽՈՒՐՇՈՒԴՅԱՆ-- «Յուրաքանչյուր ժողովուրդ գոյատևելու բնականոն ապրելու համար պետք է ունենա իր ազատ անկախ հայրենիքը; Հայրենիքը ժողովրդի պատմական ապրելատարածքն է: Հայրենիքի գաղափարի ակունքները սկիզբ են առնում դարերի խորքից և ունեն պատմա-էթնիկական բնույթ; **Սակայն ամեն մի ապրելատարածք դեռ հայրենիք չէ**; Հողը հայրենիք է դառնում դարերի ընթացքում երբ այն պատվում է ժողովրդի պատմա –մշակութային, ազգագրական, ճարտարապետական հուշարձաններով, նախնիների գերեզմաններով, որը սրբագործվում է թշնամիների դեմ մղած պատերազմներում տարած հաղթանակներով և հերոսների արյունով, երբ ձևավորվում են ազգային բնավորության գծերը ավանդույթները, բարքերը, տարազը, լեզվական առանձնահատկությունները, ազգային ինքնագիտակցությունը: Հայ ժողովրդի հայրենիքի ազատագրության և անկախության վերականգնման համար մղած դարավոր պայքարը պատմության մեջ է մտել ՀԱՅԿԱԿՆ ՀԱՐՑ, ՀԱՅ ԴԱՏ և ՊԱՀԱՆՋԱՏԻՐՈՒԹՅՈՒՆ անուններով; Կորցրած հայրենիքի ամեն մի մասի ազատագրման համար մղվող պայքարը Հայկական հարցի բաղկացուցիչ մասն է կազմում; Հայոց պատմության արդի փուլում Լեռնային Ղարաբաղի ազատագրական պայքարը հայկական հարցի պատմության փառավոր էջերից մեկն է; ՍԱԿԱՅՆ ՀԱՅԿԱՆ ՀԱՐՑԸ ԼՈԿ ՀԱՅՐԵՆԻՔԻ ԱԶԱՏԱԳՐՄԱՆ ՊԱՀԱՆՋ ՉԷ, **<u>նա նաև ազգի գոյատևման , հայրենիքի գաղափար է</u>**, առանց որի ժողովուրդները դառնում են

անհայրենիք, զրկվում պատմական հիշողություններից, վերածվում ազգային դեմք ու ոգի չունեցող ամբոխի և ցրվում աշխարհով մեկ՝ ղեկավարվելով << որտեղ հաց այնտեղ կաց>> կարգախոսով»: /Լ. ԽՈՒՐՇՈՒԴՅԱՆ-- Հայկական հարց, Երևան-1995թ:

ՆԻԿՈՂԱՅՈՍ ԱԴՈՆՑ—Հայկական հարցի ծագումը պետք է փնտրել «անցյալ դարերի խավարի մեջ»: Նա հայկական հարցի լուծում էր համարվում Արևմտյան Հայաստանի 7 վիլայեթների, հայկական Կիլիկիայի և Արևելյան Հայաստանի միավորումը մեկ միասնական պետության մեջ; Սևրի պայմանագրի իրագործումը նա համարում է «հայկական հարցի կիսալուծում: Հայկական լեռնաշխարհը որոշակի ամբողջություն է, որը ոչ մի հակաճառություն չի ընդունում»: / Հայկական հարցի լուծման շուրջ/

ԿԻՐԱԿՈՍՅԱՆ ԱՐՄԱՆ. «Հայկական հարցը» (Հայկական հարց հանրագիտարանից) «Հայկական հարցը հայ ժողովրդի քաղաքական պատմության պրոբլեմների համակարգ է՝ կապված իր պատմական տերիտորիայում անկախ պետականության վերականգնման ձգտումների հետ: Հայկական հարցի ծագումը կանխորոշված էր Հայաստանի ազգային պետականության կորստով»:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայկական հարցի ծագման բովանդակության և զարգացման հետագա ընթացքի մասին պատմագիտության մեջ կան տարբեր մոտեցումներ: **Ըստ պատմագիտության մեջ իշխող տեսակետի՝ հայկական հարցը ծագել, ասպարեզ է իջել 1877-78 թթ. ռուս-թուրքական պատերազմի շրջանում, առաջին անգամ իրավական ձևակերպում է ստացել Սան Ստեֆանոյի պայմանագրում և միջազգայնացվել՝ քննարկվելով Բեռլինի կոնգրեսում:** Բեռլինի կոնգրեսից հետո հայկական հարցը դարձել է միջազգային դիվանագիտության հարց՝ պատմական տարբեր ժամանակաշրջաններում քննարկվելով միջազգային տարբեր ատյաններում և առ այսօր մնալով չլուծված: Նախապես ծագելով որպես Օսմանյան Թուրքիայի հայկական նահանգներում անցկացվելիք բարենորոգումների, արևմտահայերի անձի, գույքի, պատվի ապահովության ու պաշտպանության հարց՝ հայկական հարցը հետագա տարբեր պատմական ժամանակաշրջաններում լրացվել է հայ ժողովրդի ազգային ազատագրության, անկախության, միավորման և պետականության համար մղվող պայքարի հարցերով՝ ստանալով նոր բովանդակություն:

Նեղ իմաստով՝ արևմտահայությանը վերաբերող հարցից այն դարձել է լայն առումով հայ ժողովրդի ազատության, անկախության, պետականության վերականգնման, խաղաղ ու ստեղծարար կյանքի համար մղվող պայքարի հարց: Եթե նկատի ունենանք այն հանգամանքը, որ ազատագրական պայքարը հայ ժողովրդի պատմության մշտական ուղեկիցն է եղել, որ իր ծագման և կազմավորման պահից հայ ժողովուրդը պայքար է մղել

ազատության և անկախության համար, ապա իրավացի է դառնում Լեոյի այն տեսակետը, թե հայոց հարցը նույնքան հին է, որքան ինքը՝ հայ ազգը: Հայկական հարցի ակունքները հասնում են մինչև հայոց պետականության կորուստը, այն ժամանակ, երբ հայ ժողովուրդը կորցրեց իր անկախությունը 11-րդ դարում, իսկ Կիլիկիայի հայկական թագավորության անկումով փակվեց միջնադարյան հայոց պետականության վերջին էջը: Արդեն XVI դարում սկիզբ առան ազգային- ազատագրական ոգորումներ, որոնք անհատական նախաձեռնություններ էին (օրինակ՝ 1547 թ.-ի հայոց կաթողիկոս Ստեփանոս Սալմաստեցու հրավիրած Էջմիածնի գաղտնի ժողովը, 1562թ.-ի Միքայել Սեբաստացի կաթողիկոսի հրավիրած ժողովը, Աբգար դպիր Եվդոկացու մեկնումը Վենետիկ), բայց և հայկական հարցի լուծման ճանապարհին կատարվող առաջին քայլերը: **Ուստի XVI-XVII դարերը այս իմաստով համարվում են հայկական հարցի ծագման և արծարծման սկզբնական փուլ կամ նախապատրաստական շրջան:** Հայաստանը ազատագրելու համար իր գործունեությունը ծավալեց Իսրայել Օրին, որը երկար Եվրոպա դեգերելուց հետո մեկնեց Եվրոպա և Ռուսական ցար Պետրոս Մեծից օգնություն խնդրեց Հայաստանը Թուրքիայի և Պարսկաստանի լխից ազատագրելու համար; Իսրայել Օրին դրեց հայ-ռուսական քաղաքական հարաբերությունների հիմքը, կողմնորոշելով ազատության համար դեպի Ռուսաստան; Այնուհետև ազատագրության իր գաղափարներով ու ծրագրերով հանդես է գալիս Հովսեփ Էմինը, Մադրասի հայրենասիրական խմբակը Շահամիր Շահամիրյանի գլխավորությամբ; Այս էտապում հայկական հարցի բովանդակությունը պարսկա-թուրքական տիրապետությունից Հայաստանի ազատագրության հարցն էր:

XX դարում՝ առաջին աշխարհամարտի տարիներին, երիտթուրքական կառավարությունը հայ ազգի նկատմամբ իրականացրեց մեծագույն ոճիր. հայ ազգը ենթարկվեց ցեղասպանության: Մեր օրերում հայկական հարցի բովանդակությունը լրացվեց արցախյան հիմնահարցով: Հայկական հարցն այսօր նույնքան արդիական է և կենսականորեն կարևոր, որքան ժամանակին:

Հայկական հարցն այսօր հայ ժողովրդի համար կենսականորեն կարևոր մի շարք հիմնախնդիրների ամբողջություն է, որոնք պայմանավորված են նրա պատմական անցյալով և ներկա հիմնախնդիրներով: Այսօր հայկական հարցի, հայոց պահանջատիրության առանցքն են կազմում արցախյան հարցի արդարացի լուծումը, ցեղասպանության միջազգային ճանաչումը, ոճրի դատապարտումը, հատուցման հիմնախնդիրը և որպես վերջնական նպատակ՝ ազատ, անկախ և միացյալ հայրենիքի կերտումը:

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ՍԿԶԲՆԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՓՈՒԼԵՐԻ ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Հայկական հարցի պատմությունը պայմանականորեն բաժանվում է երկու փուլի: Առաջինը ընդգրկում է XV դարի երկրորդ կեսից մինչև 1877-1878 թթ. ռուս- թուրքական պատերազմը, երբ հայ ազատագրական շարժման գործիչները դիվանագիտական բանակցությունների միջոցով փորձում էին եվրոպական որևէ պետության կամ պետությունների խմբի զինված միջամտությամբ ազատագրել Հայաստանը և վերականգնել նրա պետականությունը: Այս փուլում Հայկական հարցը չի մտել միջազգային դիվանագիտության ոլորտ, չի դարձել ընդհանուր քննարկման առարկա և, բնականաբար, դրա մասին չի ընդունվել որևէ որոշում: Անշուշտ, տերությունները տեղյակ էին հայերի դրությանն ու պայքարին, որոշ դեպքերում էլ առանձին երկրներ փորձել են միջամտել իրադարձություններին, ինչպես, օրինակ, Ֆրանսիան 1862 թ. Զեյթունի հայտնի դեպքերի ժամանակ: Այս փուլում փաստորեն Հայկական հարցը այդպես էլ մնաց որպես հայերին հետաքրքրող ու վերաբերող ներքին հարց: Հայկական հարցի սկզբնական փուլին բնորոշ էր սեփական ուժերի նկատմամբ անվստահության և դրսի օգնությամբ ազատագրվելու գաղափարը: Հայկական հարցի երկրորդ փուլն ընդգրկում է 1877-1878 թթ. ռուս- թուրքական պատերազմից մինչև Առաջին համաշխարհային պատերազմի սկիզբը. այս փուլը նշանավորվեց Հայկական հարցի միջազգայնացմամբ, երբ այն դարձավ դիվանագիտական քննարկման առարկա: Այդ շրջանում հայկական հարցը հանդես էր գալիս որպես Արևելյան հարցին բաղկացուցիչ մաս: Հայկական հարցը առնչվում էր արևելյան հարցին Օսմանյան կայսրության հետ Ռուսական կայսրության փոխհարաբերությունների միջոցով: Արևելյան և Հայկական հարցերը XIX դարի ընթացքում և XX դարի առաջին տասնամյակներին գտնվում էին միջազգային քաղաքականության կիզակետում:

Հայկական հարց եզրույթը առաջին անգամ իրավական փաստաթղթերի մեջ է մտել Սան Ստեֆանոյի դաշնագրի 16-րդ և Բեռլինի կոնգրեսի 61-րդ հոդվածներով: Սան Ստեֆանոյի դաշնագրում հայկական հարցը իր արտացոլումը գտավ 16-րդ հոդվածում, որը ուներ հետևյալ բովանդակությունը. «Բարձրագույն դուռը պարտավորվում է Թուրքիայի հայաբնակ վայրերում իրականացնել բարեփոխումներ և ապահովել հայերի անվտանգությունը քրդերից ու չերքեզներից: Բայց մինչև այս բարեփոխումների իրականացումը պահանջվում էր այդ նահանգներում ռուսական զորքերի ներկայություն»: Սան Ստեֆանոյի դաշնագրից հետո հայկական պատվիրակությունը Մկրտիչ Խրիմյանի գլխավորությամբ մեկնեց Բեռլին՝ մասնակցելու Բեռլինի վեհաժողովին: Այստեղ ևս որոշվեց բարեփոխումներ իրականացնել Թուրքիայի հայաբնակ նահանգներում և ապահովել հայերի անվտանգությունը քրդերից ու չերքեզներից, բայց չէր պահանջվում ռուսական զորքերի ներկայությունը: Հայկական պատվիրակությունը վերադարձավ ձեռնունայն, ապա եկավ եզրակացության. Իրենց ազատությունը կախված է միայն սեփական խելքից, զենքից, ուժից և միջոցներից: Այդ շրջանում հայ իրատես գործիչներ Գրիգոր Օտյանը, նաև Գարեգին Սրվանձտյանը արդեն քարոզում էին, որ հայության ազատության խնդիրը հայ ժողովրդի ձեռքին է:

Գարեգին Սրվանձտյանն այդ օրերին գրեց. «Հայաստանի մեջն է բուն հայկական խնդիրը, իսկ մենք Պեռլինի մեջ կորոնենք զայն»:

1912-14թթ - Հայկական հարցը արևմտյան հայաստանի 6 վիլայեթներում բարեփոխումների նախագիծ ու ինքնավարության հարց էր / Ա.Մանդելշտամ, 1914թ հունվարի 26-ի ռուս-թուրքական համաձայնագիր/ :

1919թ - հայկական հարցը ՄԻԱՑՅԱԼ ԱԶԱՏ ԱՆԿԱԽ ՀԱՅԱՍՏԱՆԻ հարցն էր, որը իր արտահայտությունը գտավ **1920թ Սևրի պայմանագրով** և դարձավ հայկական հարցի լուծման ամենաբարձր գագաթը:

Խորհրդային Հայաստանի տարիներին տարածքների ու սահմանների հարցն էր, որը կարող էր լուծվել ի հօգուտ հայերի , սակայն Խորհրդային կառավարությունը հայկական զգալի տարածքներ զիջեց հարևան պետություններին՝ քեմալական թուքիային ու Ադրբեջանին , ինչպես նաև Վրաստանին; Դրանով զգալի վնաս հասցնելով Հայկական հարցի արդարացի լուծմանը:

1921թ - **Լոնդոնի կոնֆերանսում** հայկական հարցի բովանդակությունը դարձել էր «ազգային օջախ» ստեղծելու հարց, իսկ 1922-23թթ **Լոզանի կոնֆերանսում** հայկական հարցը դարձավ գաղթականների հարց և հանձնվեց Ազգերի Լիգային:

1945թ - Պոտսդամի կոնֆերանսում հայկական տարածքների վերադարձի հարցը խաղարկվում էր և ընկալվում էր որպես ներգաղթ:

80-ական թթ.- ից Արցախի հիմնահարցը մեկնակետն է հայկական հարցի արդի փուլի:

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ՝ ԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՐՑԻ ԲԱՂԿԱՑՈՒՑԻՉ ՄԱՍ

Արևելյան հարցը Եվրոպական դիվանագիտության մեջ հիմնախնդիրների ամբողջություն էր՝ Օսմանյան կայսրության և նրա հպատակ ժողովուրդների ազատագրման, պատմական ճակատագրի, ինչպես նաև մեծ տերությունների գաղութային քաղաքականության վերաբերյալ:

«Արևելյան հարց» հասկացությունն առաջին անգամ գործածել են Սրբազան դաշինքի (Ռուսաստան, Ավստրիա, Պրուսիա, Ֆրանսիա և այլն) երկրները՝ 1822 թ-ի Վերոնայի կոնգրեսում՝ Թուրքիայի դեմ Հունաստանի մղած անկախության պատերազմի առիթով:

Արևելյան հարցի պատմությունն սկսվել է XVIII դարի վերջից և ավարտվել Առաջին համաշխարհային պատերազմով (1914–18 թթ.), երբ փլուզվեց Օսմանյան կայսրությունը:

Օսմանյան Թուրքիայի տիրապետությունը կարևոր արմատն է Հայկական հարցի, բայց ոչ ամբողջ հիմքը; 16-17-րդ դարերում Սեֆյան Պարսկաստանի դեմ վարած պատերազմներով Օսմանյան Թուրքիան տեր դարձավ Հայկական հողերի արևմտյան մասին 1555թ. և 1639թ բաժանումներով, իսկ Արևելյան Հայաստանը անցավ Պարսից տերությանը; 18-րդ դարում սկսված ռուս-պարսկական և ռուս-թուրքական մի քանի պատերազմների հետևանքով որը ընդհատումներով շարունակվեց մինչև 19-դարի 80-ականներ / Բուխարեստի,

Գյուլիստանի, Թուրքմենչայի, Ադրիանապոլսի և Բեռլինի պայմանագրերով/ ռուսական կայսրությունը տիրացավ Անդրկովկասին և հայկական հողերի մի մասին;

19-րդ դարի վերջին քառորդին /1878թ/ Հայաստանի պատմական հողերը բաժանված էին Օսմանյան Թուրքիայի, Պարսկաստանի և ցարական կայսրությունների միջև; ՈՒրեմն հայկական հարցը առնչվում էր ոչ միայն օսմանյան այլև պարսից և ցարական կայսրություններին:

Արևելյան հարցի հիմնախնդիրները XVIII–XIX դարերի միջազգային հարաբերությունների գլխավոր առանցքն էին:

1877–78 թթ-ի ռուս-թուրքական պատերազմից հետո կնքված Սան Ստեֆանոյի, ապա՝ Բեռլինի պայմանագրերի (1878 թ.) փաստաթղթերում, միջազգային դիվանագիտության մեջ առաջին անգամ գործածվել է նաև «Հայկական հարց» հասկացությունը և դարձել Արևելյան հարցի բաղկացուցիչ մասը:

Առաջին աշխարհամարտում Թուրքիայի պարտության հետևանքով Օսմանյան կայսրությունից անջատվել են առանձին ազգապատկան տարածքներ: Սևրի հաշտության պայմանագրով (1920 թ.) ճանաչվել է նաև անկախ և միացյալ Հայաստանի գոյությունը: Սակայն Թուրքիայում ծավալված ազգայնամոլական շարժումը, քեմալական Թուրքիայի և Խորհրդային Ռուսաստանի մերձեցումը խոչընդոտել են Սևրի

պայմանագրի իրագործումը. Արևմտյան Հայաստանն ու Կիլիկիան մնացել են թուրքական տիրապետության տակ:

1922–23 թթ-ի Լոզանի կոնֆերանսում ճանաչվել են Թուրքիայի նոր սահմանները. Օսմանյան կայսրությունը դադարել է գոյություն ունենալուց, և «Արևելյան հարց» հասկացությունը դուրս է եկել ասպարեզից: Արևելյան հարցը լուծվել է, սակայն Հայկական հարցը շարունակում է մնալ չլուծված:

Ընդունված է այն կարծիքը թե <<արևելյան հարցը>> ծագեց Մերձավոր Արևելքում ցարական Ռուսաստանի հայտնվելով; Այդ ընթացքում էր որ եվրոպական մեծ տերությունների ուշադրության առարկա դարձավ Օսմանյան կայսրության ներքին քաղաքականությունն ու նրա հպատակ քրիստոնյա ժողովուրդների ազատագրական պայքարը; Այդ պայքարը հովանավորելով եվրոպական տերությունները նաև իրենց ազդեցությունը տարածեցին կայսրության մեջ; Ռուսաստանի գործնական օգնությունը թուրքիայի դեմ ելած ազգերին բարդացրեց իրավիճակն ու ավելի խորացրեց ազդեցության գոտիներ ստեղծելու Բոսֆորի և Դարդանելի նեղուցներից ազատ ելումուտ ունենալու եվրոպական պետությունների մրցակցությունը; Եվ այդ ժամանակից արևելյան հարցը անլուծելի թնջուկ դարձավ, իսկ հայկական հարցը առնչվեց ու մտավ Արևելյան հարցի ոլորտ:

Եվրոպական տերությունների, Ռուսաստանի, Օսմանյան կայսրության շահերը բախվում էին Արևելյան հարցում: 1875թ բռնկվեց Բալկանյան ժողովուրդների ազգային ազատագրական պայքարը Օսմայնայն տիրապետության դեմ և նորից քաղաքական ասպարեզ բարձրացավ Արևելյան հարցը; Եվրոպական խոշոր պետությունները՝ այդ թվում և Ռուսաստանը սկսեցին իրենց ռազմաքաղաքական և դիվանագիտական մրցապայքարը Օսմանյան կայսրության՝ այդ <<հիվանդ>> <<կարկատված>> պետության ժառանգությունը բաժանելու համար; Յուրաքանչյուր պետություն ձգտում էր շատ օգուտ քաղել փլուզվող օսմանյան կայսրությունից; Այնտեղ իր շահերն ուներ նաև ռուսական ցարիզմը, որը ձգտում էր հաստատվել Բալկաններում, տիրանալ Սև ծովին, Բոսֆոր ու Դարդանելի նեղուցներին և սլավոն եղբայրներին օգնելու դրոշի տակ փորձում իր իրագործել իր ծրագրերը Մերձավոր Արևելքում; Չնայած դրան **Ռուսաստանը օբյեկտիվորեն հանդիսանում էր հակաթուրքական ազգային-ազատագրական պայքարին օժանդակող ուժ թե՛ Բալկաններում, և թե՛ Արևմտյան Հայաստանում;** Բակլաններում բախվում էին Ռուսաստանի և Ավստրո-Հունգարիայի շահերը, վերջինս ձգտում էր տիրանալ Բոսնային և Հերցեգովինային; Ռուսաստանի գլխավոր մրցակիցը Բալկաններում և Մերձավոր Արևելքում Անգլիան էր; Լոնդոնի մտահոգությունն այն էր Կ.Պոլիսն ու նեղուցները չանցնեին Ռուսաստանին; Արևելյան հարցը անգլիացիները ըմբռնում էին և մեկնաբանում էին, որպես Հնդկաստանին առնչվեղ հարց; Միջերկրական ծովը դեպի Հնդկաստան տանող կարևոր ճանապարհներից մեկն էր և այդ ծովն ու նրա հետ կապված մյուս ջրային ուղիները պետք է ազատ և անվտանգ լինեին; <<Մենք օժանդակում ենք Թուրքիային մեզ համար և մեր սեփական շահերին համապատասխան>>

հայտարարել է անգլիայի պրիմեր-մինիստր լորդ Բիքոնսվիլդը / նաև Դիզրայելի ծագումով հրեա/; Նա հրապարակավ թուրքանպաստ հայտարարություններ էր անում և հանդես գալիս <<Ստատուս Քվոյի>> պահպանման քաղաքականությամբ, ոչ թե թուրքական պետության համար այլ Ռուսաստանի ազդեցությունը սահմանափակելու նպատակով:

ՍԱՆ-ՍՏԵՖԱՆՈՅԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ

1877-1878թթ. ռուս-թուրքական պատերազմը թե բալկաններում և թե Կովկասում ընթանում էր ռուսական բանակի հաղթանակներով, թուրքական բանակը իրար երևից պարտություն էր կրում և Աբդուլ Համիդը ստիպված էր հաշտություն խնդրել; Ռուսաստանը կնքում է հաշտության նախնական պայմանագիր 1878թ փետրվարի 19-ին Սան-Ստեֆանո ծովափնյա ավանում/ հայ մեծահարուստ Տատյան Առաքել բեյի ամառանոցում/ Սան-Ստեֆանոյի 29-ը կետից կազմված հաշտության պայմանագիրը նշանավորվեց, որպես բալկանյան քրիստոնյա ժողովուրդների ազատագրման մանիֆեստ; 1877-78թթ ռուս-թուրքական պատերազմից հաղթանակով դուրս եկած ցարական Ռուսաստանը պարտված Թուրքիայի հետ կնքեց Սան-Ստեֆանոյի պայմանագիրը; Ինքնաբերաբար առաջ քաշվեց Ռուսաստանի կողմից գրաված Արևմտյան Հայաստանի հողերի/ Կարսի Արդահանի Ալաշկերտի Բայազետի/ հարցը; Քաղաքական զարթոնք ապրող հայությունը օրինակ առնելով հույների , բուլղարների և այլ քրիստոնյա փոքրամասնությունների ազատագրական պայքարից, ցանկանում էր ինքն էլ ազատագրվել օսմանյան թուրքիայի լծից; Նա դիմեց Ռուսաստանի օգնությանը, այսինքն իր դատը նրա տնօրինությանը հանձնեց արդար լուծում ստանալու ակնկալիքով; Սան-Ստեֆանոյի պայմանագիրը վերանայվեց Բեռլինի կոնգրեսում; Հայկական հարցը քննեցին ոչ միայն Ռուսաստանն ու Թուրքիան, այլև Անգլիան, Ֆրանսիան, Գերմանիան, Ավստրո-Հունգարիան, Իտալիան , որոնք ժամանակի մեծ տերություններն էին; Հայկական Հարցը մի մասնիկն էր Արևելյան հարցի և այդ ծիրում էլ քննարկվեց Բեռլինի վեհաժողովում; Բնականաբար Հայկական Հարցը գոյություն է ունեցել Արևելյան հարցին զուգընթաց, սակայն միջազգային ճանաչում գտավ 1877-1878թթ.ռուս-թուրքական պատերազմի, Սան-Ստեֆանոյի պայմանագրի և Բեռլինի վեհաժողովի հետևանքով:

Պայմանագիրը չարդարացրեց արևմտահայերի սպասելիքները; Ռուսաստանը , ինչպես նախորդ, այնպես էլ այս պատերազմում առաջնակարգ համարեց իր դիրքերի ամրապնդումը առաջին հերթին եվրոպական տարածքներում, բալկաններում; Մինչդեռ Արևմտյան Հայաստանում գրաված հողերը ռուս դիվանագետները համարում էին<<խիստ հետամնաց ճանապարհազուրկ և զարգացման համար մեծ միջոցներ պահանջող>> տարածք; **Սան-Ստեֆանոյի պայմանգրում և Բեռլինի վեհաժողովում 16-րդ և 61-րդ հոդվածները վերաբերում էին թուրքիայի տիրապետության տակ գտնվող արևմահայությանը, որտեղ էլ արծարծվեց**

նաև 19-րդ դարի 2րդ կեսի հայ-հասարակական քաղաքական կյանքի հիմնական առանցք կազմող Հայկական հարցը; Այն կազմելով Արևելյան հարցի բաղկացուցիչ

մասը, այդ ժամանակաշրջանում վերաբերում էր արևմտահայության ազատագրության կամ ինքնավարության խնդրին;

Ռուսաստանի պատերազմական հաջողությունները թե բալկաններում , և թե Արևմտյան Հայաստանում անհանգստացրեցին Եվրոպական խոշոր պետություններին՝ մասնավորապես Անգլիային և Ավստրո-Հունգարիային; Անգլիայի պրեմիեր-մինեստր Լորդ Բիքոնսվիլդը սկսեց ահաբեկել Ռուսաստանին, որ Կ.Պոլիսը գրավելու դեպքում, ինքը հնդիկներով ու կանադացիներով համալրված անգլիական էքսպեդիցիոն 300 հազ բանակ և ռազմածովային նավատորմ կուղարկի Մարմարի ծով ու Կ.Պոիս; Ավստրոհունգարիան բողոք հայտնեց ռազմական գործողությունների շարունակման դեմ; Ռուսաստանի համար ստեղծվել էր քաղաքական աննպաստ միջազգային իրադրություն; Հաշվի առնելով Ղրիմի պատերազմի հետևանքները և Ռուսաստանը ստիպված էր գնալ զիջումների և համաձայնել, որ վերանայվի Սան-Ստեֆանոյի պայմանգիրը Բեռլինի վեհաժողովում; Անգլիան հայտարարում էր, որ Ռուսաստանի և Բ. Դռան միջև կնքված պայմանագիրը վերաբերում է 1856-71թթ տրակտատներին և պետք է լինի <<եվրոպական պայմանագիր>> և իրավական չի ճանաչվի առանց վերոհիշյալ տրակտատները ստորագրած պետությունների համաձայնության>>1. /Ջոն Կիրակոսյան <<Բուրժուական դիվանագիտությունը և Հայաստանը>>/ փորձելով ռուս-թուրքական կոնֆլիկտը վեր աձել միջազգային ավելի լայն պրոբլեմի:

Սան-Ստեֆանոյի պայմանագիրը վերանայվեց Բեռլինի կոնգրեսում: Հայկական հարցը քննեցին ոչ միայն Ռուսաստանն ու Թուրքիան, այլև Անգլիան, Ֆրանսիան, Գերմանիան, Ավստրո-Հունգարիան, Իտալիան , որոնք ժամանակի մեծ տերություններն էին: Հայկական Հարցը մի մասնիկն էր Արևելյան հարցի և այդ ծիրում էլ քննարկվեց Բեռլինի վեհաժողովում; Բնականաբար Հայկական Հարցը գոյություն է ունեցել Արևելյան հարցին զուգընթաց, սակայն միջազգային ճանաչում գտավ 1877-1878թթ.ռուս-թուրքական պատերազմի, Սան-Ստեֆանոյի պայմանագրի և Բեռլինի վեհաժողովի հետևանքով:

ԲԵՌԼԻՆԻ ԿՈՆԳՐԵՍԸ

Բեռլինի կոնգրեսը տեղի ունեցավ 1878թ հունիս-հուլիս ամիսներին , այն եկավ նսեմացնելու ռուսական զենքի հաղթանակները, չափավորելու ցարիզի արտաքին ռազմական հաջողությունները ի շահ Անգլիայի, Ավստրո-Հունգարիայի, իսկ ամենա կարևորը ի շահ Օսմանյան կայսրության և ի վնաս բալկանյան ու հայ ժողովուրդների; Կոնգրեսի բացման 1-ին նիստում նախագահ ընտրվեց կանցլեր Բիսմարկը, որը խոստացել էր << ազնիվ միջնորդի>> դեր կատարել; Բեռլինի կոնգրեսի 12-րդ նիստում խոսք բացվեց Հայաստանի մասին, Սոլսբերին առաջարկում էր Սան-Ստեֆանոյի պայմանագրի 16-րդ հոդվածից պահել միայն

բարենորոգումներին վերաբերող վերջին տողերը և կրճատել նրա սկիզբը, այսինքն առաջադրվեց ռուսական զորքերի դուրս բերելու խնդիրը, իսկ 15-րդ նիստում ընդունվում է Սոլսբերիի առաջարկած հայաբնակ վայրերին վերաբերող 61-րդ հոդվածը,որտեղ նույնիսկ Հայաստան բառը չկա, իսկ անցկացվելիք բարենորոգումների վերահսկողությունը հանձնվում էր եվրոպական 6 պետությունների / Գերմանիայի ,Մեծ Բրիտանիա, Ֆրանսիա, Ռուսաստան ,Ավստրո-Հունգարիա, Իտալիա/ տնօրինությանը; Ինքնավարության մասին ոչ մի խոսք չկար; Հայկական հարցը լուծելու ոչ մի մտադրություն չունեին աշխարհի վերաբաժանման, նոր գաղութների համար գոտեմարտի բռնկված մեծ տերությունները; Եվրոպական կառավարությունների համար հայկական հարցը սոսկ միջոց էր ուզած ժամանակ Օսմանյան կայսրության գլխին մահակը պահելու նրա ներքին գործերին միջամտելու համար; Զուր էին հայ պատվիրակները՝ Մկրտիչ Խրիմյան, Մինաս Չերազ, Խորեն Նարբեյ և Ստեփան Փափազյանը դռնեդուռ ընկած խնդրում, աղերսում և հայկական հարցի արդարացի լուծում ակնկալում վեհաժողովում; Ռուսաստանը կոնգրեսում մենակ էր և նա էլ ինչպես մյուս պետությունները շահագրգռված չէր հայկական հարցի լուծմամբ; Հայ պատվիրակությունը չմասնակցեց կոնգրեսի աշխատանքներին և հիասթափված տուն դարձավ; /Մ.Խրիմյան երկաթի շերեփի գաղափարը/

Բեռլինի կոնգրեսի արդյունքները պատերազմում հաղթանակած Ռուսաստանի արտաքին քաղաքականության անհաջողությունն էին նշանավորում; Վեհաժողովում ռուսների պարտությունը հարդարվել էր Անգլիայի ջանքերով; Թուրքիայի ժառանգության հարցը չլուծվեց, պատերազմին ամենևին չմասնակցած

Անգլիան հասավ դիվանագիտական խոշոր հաջողությունների, իսկ Հայաստանը դարձավ նրա կնքած << պատվավոր հաշտության >> սեղանի զոհը /Կիպրոսի զավթումը.../; **Ռուս -անգլիական մրցակցության հետևանքները չափազանց ցավալի եղան հայ ժողովրդի համար; Կոնգրեսն օրինականացրեց օսմանյան կայսրության ներքին գործերին միջամտելու մեծ տերությունների քաղաքականությունը, որը ոչ մի լավ բան չէր տալու հայ ժողովրդին, բացի թուրքական սուլթանի կատաղությունը գրգռելուց;** Նա էր տերը և ձգտելու էր յուրովի վարվել իր հպատակների հետ, ամենից առաջ ազատվել հայերից և հայկական հարցից; **Եվ 1890-ական թվականներից սկսված հայերի զանգվածային, պարբերական կոտորածներն ու ջարդերը դարձան թուրքական սկզբունքներից մեկը ,այդ կերպ Աբդուլ Համիդը ձգտում էր դատարկել Արևմտյան Հայաստանը և լուծել Հայկական հարցը; Այդ քաղաքականությունը հետո շարունակեցին երիտթուրքական պարագլուխները՝ Թալեաթ, Էնվեր, Ջեմալ, օգտվելով 1-ին աշխարհամարտի ընձեռած հնարավորությունից իրագործեցին Հայոց ցեղասպանությունը ձգտելով վերացնել հայկական հարցը՝հայերին ոչնչացնելու միջոցով**;

61-րդ հոդվածը, որը տեսականորեն ենթադրվում էր, որպես հայ ժողովրդի փրկության միջոց, գործնականում նրա համար դարձավ չարիք, նրա կործանման գործիքը; Եվրոպայի կողմից պաշտպանյալ հայաբնակ շրջաններն էին, որ դժնդակ կոտորածներով սրբվեցին 1890-ական թվին; Նույն այդ Եվրոպան 1915-18թվին ոչ միայն չպաշտպանեց արևմտահայությանը թուրքական բնաջնջումից, այլև ինքն

անմիջական մեղսակից դարձավ արևմտահայության համապարփակ ողբերգությանը; Եվրոպական մեծ տերությունները հայկական հարցը դարձնելով միջազգային դիվանագիտության առարկա, ծառայեցնում էին իրենց շահերին; Նրանք առաջ էին քաշում այդ հարցը այն ժամանակ, երբ ցանկանում էին զիջումներ, օգուտներ ստանալ Թուրքիայից, իսկ երբ հասնում էին իրենց նպատակին մոռանում էին հայերի մասին;

Հայկական հարցից ազատվելու համար սուլթան Աբդուլ Համիդն ընտրեց խնդրի լուծման այլ ճանապարհ՝ ոչ թե բարեփոխումներ , այլ զանգվածային ջարդեր ու արևմտահայերի ոչնչացում, << չկա հայ ժողովուրդ չկա հայկական հարց>>, իսկ երիտթուրքերը որդեգրելով այդ քաղաքականությունը ցեղասպանության միջոցով /Սալոնիկ 1911թ գաղտնի ժողովի որոշում/գրեթ լրիվ հայաթափեցին արևմտյան Հայաստանը ու Կիլիկիան; Հայերը հայրենազրկվեցին ու արտագաղթեցին օտար երկրներ; Այսպես ստվարացավ հայկական Սփյուքը; Հայկական հարցի լուծման թուրքական ծրագիրը իրագործվեց՝՝ Արևմտյան Հայաստանում այսօր գրեթե հայ չկա նրանք բռնի հայաթափվել են ու հայրենազրկվել են; Բայց Հայկական հարցը, Հայ դատը և պահանջատիրության խնդիրները դեռ չի վերածել ու չի վերանալու մինչև չստանա արդարացի լուծում; Այսօր 100 տարի անց այն կրկին գոյություն ունի:

Բարենորոգումների մայիսյան ծրագիրը: 1895 թ. մայիսի 11-ին մեծ տերությունները սուլթանական կառավարությանը ներկայացրին բարենորոգումների ծրագիր, որը թեև հաստատվեց 1895 թ. հոկտեմբերին, սակայն այդպես էլ չիրագործվեց սուլթանական կառավարության կողմից: 90-ական թվականների կոտորածներին Օսմանյան Թուրքիայում ոչնչացվեց շուրջ 300.000 հայ:

Ցարիզմի գաղութային քաղաքականությունը Կովկասում՝ հայկական հարցի մի նոր կնճիռ: 19-րդ դարի առաջին կեսին ռուս-պարսկական, ռուս-թուրքական մրցակցության արդյունքում Ռուսաստանը ամրապնդեց իր դիրքերը Կովկասում: 1828թ.-ին կնքված Թուրքմենչայի պայմանագրով Ռուսաստանը տիրացավ Արևելյան Հայաստանին: 1878թ. Սան-Ստեֆանոյի պայմանագրով Ռուսաստանին անցած տարածքների վրա կազմավորվեց վարչական նոր շրջան՝ Կարսի մարզը: Ցարիզմը Կովկասում և Արևելյան Հայաստանում վարում էր ազգային-գաղութային քաղաքականություն, որի վառ ապացույցներն են հայկական դպրոցների փակումը 19-րդ դարի 80-90-ական թթ. , 1903թ. հունիսի 12-ի Նիկոլայ II ցարի հրամանագիրը հայ եկեղեցու կալվածքների և գույքի բռնագրավման մասին: Ռուսական առաջին հեղափոխության տարիներին հրահրվեցին հայ-թաթարական ընդհարումներ: Ցարիզմը վարում էր «բաժանիր, որ տիրես» քաղաքականությունը:

Հայկական հարցի վերաբացումը 1912-1914 թթ. : 1912թ. հոկտեմբերին սկսվեց բալկանյան երկրների պատերազմը Թուրքիայի դեմ: Բալկանյան պատերազմներում Թուրքիայի պարտությունը ազդակ հանդիսացավ հայկական հարցի վերաբացման համար: Ամենայն հայոց կաթողիկոս Գևորգ Ե-ն 1912թ. հոկտեմբերի 2-ին Կովկասի

փոխարքա Վորոնցով Դաշկովի միջոցով դիմեց ռուսական կայսրին՝ հայերին պաշտպանելու խնդրանքով: Իթթիլաֆականները Թուրքիայում, անհանգստանալով Ռուսաստանի հնարավոր միջամտությունից, փորձեցին համաձայնություն ձեռք բերել հայերի հետ՝ առաջարկելով բարենորոգումների ծրագիր, որը չէր ենթադրում եվրոպական հսկողություն, բացի այդ տարածվելու էր հայկական 6 վիլայեթներից միայն 4-ի վրա: Սակայն իրականում գործնական որևէ քայլ չէր ձեռնարկվում: 1912 թ. նոյեմբերի 10-ին **Գևորգ Ե կաթողիկոսը** դիմեց **Պողոս Նուբար Փաշային**, որը որպես եվրոպայում կաթողիկոսի լիազոր ներկայացուցիչ ստեղծեց ազգային պատվիրակություն, որը պետք է Լոնդոնի հաշտության խորհրդաժողովին հուշագիր ներկայացներ, ուր ընդգծվում էր բարենորոգումների անհրաժեշտությունը: Այդ շրջանում (1912-1913 թթ.) դիվանագիտական սուր պայքար ծավալվեց: Մեծ տերությունները (Մեծ Բրիտանիա, Ֆրանսիա, ԱՄՆ) գործնական որևէ քայլ չձեռնարկեցին: Ռուսները խորհուրդ էին տալիս սպասել հայկական հարցի կապակցությամբ խորհրդաժողովի հրավիրմանը պատերազմի ավարտից հետո: Պոլսում ռուսական դեսպանատան Անդրեյ Մանդելշտամը կազմեց բարենորոգումների մի նախագիծ, որը հունիսի 4-ին ներկայացվեց մեծ տերությունների քննությանը: Եռյակ միության երկրները (Գերմանիա, Իտալիա, Ավստրո-Հունգարիա) հրաժարվեցին ռուսական նախագծի առանցքային դրույթներն ընդունելուց: Նրանք պահանջում էին. ա) պահպանել կայսրության տարածքային ամբողջականությունը բ) թույլատրել թուրքական ներկայացուցչին մասնակցել քննարկմանը 1913 թ. հունիսի 30-ին սկսվեց բալկանյան երկրորդ պատերազմը: Հայկական հարցի լուծման համար առաջացավ անբարենպաստ իրավիճակ: Գերմանական կառավարությունը փորձ արեց ռուսական կողմի հետ համաձայնության գալ բարենորոգումների խնդրի կապակցությամբ: 1913 թ. սեպտեմբերի 10-ին Պոլսում Ռուսաստանի դեսպան Մ. Գիրսը և Գերմանիայի դեսպան Հ. Վանգենհայմը Արևմտյան Հայաստանի համար կազմեցին 6 կետից բաղկացած բարենորոգումների ծրագիր, որը սկզբից ևեթ հանդիպեց թուրքերի դիմադրությանը:

1914 թ. հունվարի 26-ին ստորագրվեց ռուս-թուրքական համաձայնագիր Արևմտյան Հայաստանում բարենորոգումների վերաբերյալ: Այն մեկ քայլ առաջ էր Բեռլինի պայմանագրի 61-րդ հոդվածից և 1895թ. մայիսյան ծրագրից, որոնցում խոսք չկար ինչպես հայկական մեկ կամ երկու նահանգներ ստեղծելու, այնպես էլ քրիստոնյա կառավարիչներ նշանակելու վերաբերյալ: Միաժամանակ մեկ քայլ հետ էր այն իմաստով, որ չէր խոսվում հայկական մարզի մասին, այլ հիշատակվում էր «Արևելյան Անատոլիա» անվանումը, կրճատվում էին հայերի իրավունքները, պահպանվում էին «Համիդիե» զորագնդերը: Լավատես էր Պողոս Նուբար փաշան, որը հույս էր հայտնում, թե արևմտահայությունն այսուհետ կապրի «արդարադատ և ապահով վարչության ներքո»: Մինչդեռ ռուս-թուրքական համաձայնագիրը չէր ապահովում ոչ հայերի ֆիզիկական անվտանգությունը, ոչ էլ նրանց գույքի և սեփականության անձեռնմխելիությունը: Ինչևէ, ստեղծվեցին երկու վարչական շրջաններ, որոնցից առաջինն ընդգրկում էր Էրզրումի, Տրապիզոնի, Սեբաստիայի վիլայեթները, իսկ երկրորդը՝ Վանի, Բիթլիսի, Խարբերդի և Դիարբեքիրի վիլայեթները: Նահանգապետեր նշանակվեցին հոլանդացի դիվանագետ Լ. Վեստենենգը և նորվեգացի Հոֆը: Սակայն

սկսվեց առաջին համաշխարհային պատերազմը, և երիտթուրքերի կառավարությունը, օգտվելով առիթից, չեղյալ հայտարարեց նաև այդ ծրագիրը:

Առաջին աշխարհամարտի տարիներին երիտթուրքերի կառավարությունը նորից գործի դրեց հայկական հարցի լուծման համիդյան քաղաքականությունը՝ իրագործելով հայոց մեծ եղեռնը: Կոտորվեց շուրջ 1.5 մլն հայ, արևմտահայությունը հայրենազրկվեց, հայաթափվեցին պատմական Հայաստանն ու Կիլիկիան:

1917Թ. ՌՈՒՍԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ և ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ

Մինչև 1917թ հոկտեմբերյան հեղափոխությունը ռուսական բանակը հայկական կամավորական խմբերի օգնությամբ արդեն գրավել էր Արևմտյան Հայաստանի մեծ մասը Վանից մինչև Էրզրում ու Տրապիզոն; Պետրոգրադի ժամանկավոր կառավարության /իշխան Լվով և արտգործնախարար Միլյուկով/ ստորագրած հրովարտակով մինչև գրված մարզերի կարգավիճակի վերջնական որոշումը Արևմտյան Հայաստանի համար հաստատվեց ժամանակավոր կարգավիճակ, քանի դեռ 1-ին աշխարհամարտը շարունակվում էր; 1917թ մայիսին Պետրոգրադից Արևմտյան Հայաստանի համար ընդհանուր կոմիսար ուղարկվեց գեներալ Ավերյանովը և նրան օգնական նշանակվեց դաշնակցական հայտնի քաղաքական գործիչ բժիշկ Հակոբ Զավրիյանը; Օրակարգի հարց էր դառնում Արևմտյան Հայաստանի վերաշինության, պապենական հողերից բռնագաղթածների վերադարձի ու այլ խնդիրներ, որոնք քննարկվեցին արևմտահայերի 1-ին համագումարում, որի նախագահը Անդրանիկն էր; Այսպես արևմտյան Հայաստանում կյանքը կարծես մտնում էր իր հունի մեջ տոգորված ազգային վերածնության գաղափարներով; Կարծես թե նշմարվում էր հայկական հարցի լուծման դրական տեղաշարժերը հատկապես որ 1-ին աշխարհամարտում հաղթելու էր Անտանտը, իսկ Ռուսաստանը ստանալու էր իր գրված տարածքները արևմտյան Հայաստանում; Արևմտյան Հայաստանը կմիավորվեր Արևելյան Հայաստանին;

Սակայն 1917թ Հոկտեմբերյան հեղափոխությունը շրջեց հետագա դեպքերի ընթացքը ի վնաս հայ ժողովրդի; Բոլշևիկյան հեղափոխությունից հետո ,որի առաջին հրովարտակները հողի և հաշտության մասին էին ,և երբ ռուս զինվորների մեծ մասը ռուս-թուրքական ճակատը լքած տուն էր վերադառնում, թուրքերի հարձակումների դեմ որպես կռվող ուժ միայն հայկական ջոկատներն էին մնացել, այսինքն արևմտյան Հայաստանի ռուսական զորքերի կողմից գրված տարածքները մնում էին անպաշտպան և թուրքերը կարող էին վերստին գրավել այն;

1917թ դեկտեմբերին բոլշևիկների առաջնորդ Լենինի և ժողկոմխորհի ստորագրած <<Թուրքահայաստանի մասին >> հրովարտակը, / որը մնաց լոկ փաստաթուղթ և նրա կենսագործման համար պայմաններ չկային/ իսկ այնուհետև 1918թ մարտի 3 Բրեստ-Լիտովսկի պայմանագիրը ծանր էր հայ ժողովրդի համար; **Հայկական հարցի**

լուծման անելանելի ուղիներ և աննպաստ ընթացք էր ձևավորվել; Տարված համաշխարհային սոցիալիստական հեղափոխության գաղափարներով Լենինի ու բոլշևիկների համար արևմտյան Հայաստանի հարցը ուներ ածանցյալ նշանակություն, նրանք ձգտում էի պահել իշխանությունը և հեղափոխությունը նույնիսկ նվաստացուցիչ Բրեստ Լիտովսկի պայմանագրով; Անտանտի նախկին դաշնակից Ռուսաստանին պատերազմից դուրս քաշելով և ռուս զինվորներին տուն վերադարձնել բոլշևիկյան Լենինյան ղեկավարությունը դրանով հեշտացնում էի թուրքական զավթումները արևմտյան և արևելյան Հայաստանում; Դեռ ավելին տարված համաշխարհային հեղափոխության գաղափարներով Լենինը և բոլշևիկները բարեկամանալու էին քեմալական Թուրքիայի հետ / միլի ժողովրդական շարժում / և արդյունքում տալու էին հայկական տարածքները, դրանով կարծես վերջնականապես փակելով հայկական հարցի լուծումը;

Մինչև Բրեստ-Լիտովսկի պայմանագրի կնքումը 1917թ դեկտեմբերի 5-ին կնքվել էր Երզնկայի զինադադարը թուրքական հրամանատարության հետ և Արևմտյան Հայաստանի մեծ մասը ռուսների գրաված տարածքում մնաց; Զինադադարը կնքվել էր սակայն Հայաստանը և Անդրկովկասը ապրում էին ծանր օրեր; Թուրքիայի հարձակումները չէին վերանում; 1918թ մարտի 3- ի Բրեստ-Լիտովսկի պայմանագրով Թուրքիային տրվեց ամբողջ արևմտյան Հայաստանը, ինչպես նաև Կարսը Արդահանը և Բաթումը; Թուրքական բանակը անցան հարձակման և արդեն իսկ թուրքերի կողմից գրաված Տրապիզոնում սկսված բանակցությունները ձգձգվեցին և արդյունք չտվեցին; Թուրքերը պահանջում էին անկախ հայտարարել Անդրկովկասը; Կային անմիաբանություն և լուրջ տարաձայնություններ վրաց մենշևիկների, թուրք-մուսավաթականների ու հայ դաշնակցականների միջև; Թուրքական բանակը սակավաթիվ ուժերով արագորեն գրավեց Բաթումը՝ տեղաբնակ մուսուլման բնակչության գործուն աջակցության շնորհիվ; 1918թ ապրիլին վրաց-մենշևիկների ու թուրք-մուսավաթականների ճնշման տակ Անդրկովկասը հայտարարվեց անկախ հանրապետություն; որով թուրքական բանակի հրամատարությունը գործողությունների ու նվաճումների ազատություն էր ստանում ՝1918թ մայիսին մտնելով Արևելյան Հայաստան հասնելով մինչև Արարատյան դաշտ;

<u>ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ 1918-20ԹԹ</u>

1918թ Մայիսյան փառահեղ հերոսամարտերի՝ Սարդարապատի, Բաշ-Ապարանի, Ղարաքիլիսայի ճակատամարտերով ծնվեց Հայաստանի առաջին հանրապետությունը; Այս հերոսամարտերի շնորհիվ բնաջնջումից փրկվեց արևելահայությունը, ինչպես նաև Մեծ եղեռնից մազապուրծ հարյուր հազարավոր արևմտահայեր; **1918թ հունիսի 4-ին Բաթումում** կնքվեց պայմանագիր Օսմանյան Թուրքիայի և ՀՀ-ի միջև, որով Թուրքիան առաջինը ճանաչում էր Հայաստանի անկախությունը, որին մնում էր 12. հազ քառ, կմ տարածք; Առանց մի թիզ հող զիջելու թուրքական կառավարությունը համաձայնվել էր ընդունել Հայաստանի

գոյությունը; **Թուրքիայի համար լուծված էր Հայկական հարցը**;Բաթումի պայմանագիրը իր ուժը պահպանեց մինչև 1-ին աշխարհամարտի ավարտը 1918թ նոյեմբերը;

Հայաստանի առաջին Հանրապետության արտաքին քաղաքականության հիմնական ուղղությունը Հայկական հարցի լուծումն էր; Խնդիր էր դրվում Արևմտյան ու Արևելյան Հայաստանների միավորումը մեկ պետության մեջ՝ **ԱԶԱՏ ԱՆԿԱԽ և ՄԻԱՑՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ստեղծումը, որը հռչակվեց ՀՀ-ի տարեդարձի** օրը 1919թ մայիսի 28-ին;

1-ին աշխարհամարտը ավարտվեց Քառյակ դաշինքի պարտությամբ և 1918թ հոկտեմբերին Մուդրոսի զինադադարով Թուրքիան ընդունեց իր պարտությունը և դուրս եկավ պատերազմից; 1919թ հունվարին Փարիզում բացվեց խաղաղության կոնֆերանս , որտեղ հաղթանակած ԱՆՏԱՆՏԻ երկերները/ Անգլիա, ֆրանսիա Իտալիա/ պետք է հաշտության պայմանագիր կնքեին պարտված Քառյակ միության երկրների այդ թվում և Թուրքիայի հետ; ԱՆՏԱՆՏԻ երկրների << փոքր դաշնակից էր>> համարվում Հայաստանը, որովհետև նա մասնակցություն էր ունեցել պատերազմին և կրել էր վիթխարի կորուստներ; Փարիզի վեհաժողով մեկնեց ՀՀ պատվիրակությունը Ավետիս Ահարոնյանի նախագահությամբ; Ավելի վաղ դեռ 1912թ Փարիզում էր գտնվում արևմտահայ պատվիրակությունը եգիպտահայ մեծահարուստ Պողոս Նուբար փաշայի գլխավորությամբ; Հայկական երկու պատվիրակները սկզբում գործում էին պառակտված; Վերջապես երկար վեճերից հետո կողմերը որոշեցին միացյալ պատվիրակության պատվո նախագահ ճանաչել Պողոս Նուբարին և Միացյալ Հայաստանի/ ներառյալ Կիլիկիան/ պահանջը ներկայացրեցին 1919թ փետրվարին; Միացյալ Հայաստանի գաղափարի իրականացման համար շատ կարևոր էր Հայկական մանդատի հարցը, հույս էր տածվում որ այն կստանձնի ԱՄՆ-ը; 1920թ մայիսին ԱՄՆ-ի Սենատը մերժեց Հայաստանի մանդատը վերցնելու Վիլսոնի առաջարկը;

Նախագահ Վուդրո Վիլսոնը շատ էր հետաքրքրվում Հայաստանով , նույնիսկ կազմեց Միացյալ Հայաստանի սահմանների վերաբերյալ քարտեզ և 1920թ նոյեմբերին ներկայացրեց Հայաստանի սահմանների վերաբերյալ իր առաջարկը, բայց այդ ժամանակ արդեն գնում էր թուրք-հայկական պատերազմը;

ՍԵՎՐԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ համարվում է հայկական հարցի լուծման գագաթը, սակայն մեկ անգամ ևս Հայկական հարցը լուծվում է միայն թղթի վրա;

1920թ օգոստոսի 10-ին փարիզի Սևր կոչվող արվարձանում Անտանտի երկրները Թուրքիայի հետ կնքեցին հաշտության պայմանագիր**; Հայստանի կողմից պայմանագիրը ստորագրեց Հանրապետության ղեկավար Ավետիս Ահարոնյանը;**

Նա այդ օրը համարել է իր կյանքի ամենաերջանիկ օրը; Սևրի պայմանագրի <<բաժին 6-րդ>> թիվ 88-93 հոդվածները վերաբերում էին Հայաստանին; Թուրքիան պարտավորվում էր ճանաչել Միացյալ Հայաստանը, որին էին անցնելու Տրապիզոնի,

Վանի և Բիթլիսի նահանգները ելքով դեպի Սև ծով, ՀՀ-ի տարածքը կազմելու էր 160 հազ. քառ. կմ; Ցավոք Սևրի պայմանագիրը չիրագործվեց և իրադարձությունների հետագա ընթացքը աննպաստ զարգացում ստացավ;

1-ին աշխարհամարտում պարտված Թուրքիայում սկսվել էր/ միլլի/ ազգայնական շարժում որը ղեկավարում էր գեներալ Մուստաֆա Քեմալը; Քեմալական շարժման նպատակն էր պայքարել ԱՆՏԱՆՏԻ երկրների դեմ ՝ պահպանելու Թուրքիայի տարածքային ամբողջականությունը; Քեմալականները չճանաչեցին սուլթանական Թուրքիայի ստորագրած Սևրի պայմանագիրը, իսկ Հայաստանի դաշնակից համարվող պետությունները՝ Ֆրանսիան, Անգլիան, Իտալիան աստիճանաբար մոռացության մատնեցին իրենց իսկ ստորագրած պայմանագիրը;

1920թ գարնանը քեմալականները Անկարայում Կ.Պոլսից սուլթանական կառավարությունից անկախ, ստեղծեցին առանձին կառավարություն Մ.Քեմալի գլխավորությամբ և մերձենալու ու բարեկամանալու առաջարկ արեցին Խորհրդային Ռուսաստանի կառավարությանը; Վերջինս համաշխարհային հեղափոխական գաղափարներով պայքարում էր արևմուտքի տերությունների/իմպերիալիստների դեմ/ և այդ դրոշի ներքո հանդես էին գալիս նաև թուրք քեմալականները, այստեղ նրանց քաղաքական շահերը համընկնում էին; 1920թ օգոստոսի 24-ին կնքվեց ռուս-թուրքական մերձեցման պայմանագիր; Ռուսաստանը սկսեց օգնել թուրքերին դրամով / ոսկով / զենքով ու զինամթերքով, որը թուրքերը օգտագործում էին ոչ թե Անտանտի տերությունների դեմ այլ Հայաստանի; Այսպիսով Հայաստանի 1-ին հանրապետությունը հայտնվեց երկու հզոր ուժերի քեմալա-բոլշևիկյան դաշինքի արանքում; Ընդ որում Ադրբեջանը դարձավ կապող օղակ Խորհրդային Ռուսաստանի ու Թուրքիայի միջև;

//Մ.Քեմալը կարելի է ասել <<կարմիր աստառ հագավ>> և կարողացավ օգտագործել թուրքիայի շահերի համար սկզբում Խորհրդային Ռուսաստանին, իսկ հետո Լոնդոնի և Լոզանի կոնֆերանսներում ստացավ Արևմուտքի աջակցությունը;//

1920թ աշնանը դրված էր Հայաստանի Խորհրդայնացման հարցը, և ընթանում էր թուրք-հայկական պատերազմը / Դաշնակցական Հայաստանը գտնվում էր թուրքական սալի և ռուսական մուրճի արանքում/ Սիմեոն Վրացյանի կառավարությունը հրաժարական տվեց և որոշեց ընդունել <<կարմիրների առաջարկը>> Հայաստանի Խորհրդայնացման մասին; Այդ իրավիճակում 1920թ դեկտեմբերի սկզբին կնքվեց Ալեքսանդրապոլի պայմանագիրը, որով Հայաստանին պարտադրվեց հրաժարվել Սևրի պայմանագրից՝ նշանակում էր հրաժարում հայկական հարցի լուծումից և այն դաշնակցական կառավարության սխալ քայլերից մեկն էր;

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ և 1921Թ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ԱՆԱՐԴԱՐԱՑԻ ԼՈՒԾՈՒՄՆԵՐԸ (ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿՈՐՈՒՍՏՆԵՐԸ)

Հայաստանի խորհրդայնացումով թվում էր թե հնարավոր կլիներ արդարացի ձևով լուծել հայկական տարածքների ու սահմանների հարցը և հայ-թուրքական հարաբերությունները դնել իրավահավասար հիմքերի վրա ու վերանայել Ալեքսանդրապոլի պայմանագիրը;

1921թ մարտի 16-ին կնքվեց ռուս-թուրքական բարեկամության ու եղբայրության մասին պայմանագիր, որով Թուրքիայի ՀԽՍՀ հետ սահմանն անցնելու էր Ախուրյան ու Արաքս գետերի հունով թուրքական կողմում թողնելով Կարսի մարզն ու Սուրմալուի գավառը; Վերջինս երբեք չէր եղել Թուրքիայի կազմում, այն ցարական բանակը գրավել էր Պարսկաստանից 1827թ; Մոսկվայում որոշում էին հայկական տարածքների ու սահմանների հարցը առանց հայերի մասնակցության; Իսկ հետո 1921թ հոկտեմբերի 13-ի Կարսի պայմանագրով /Ասքանազ Մռավյան/ Հայաստանին պարտադրվեց ընդունել սեփական տարածքների կորուստը; Ռուսաստանի ներկայացուցիչ Ա. Գանեցկին պնդում էր վերադարձնել միջնադարյան Հայաստանի մայրաքաղաք Անիի ավերակները, բայց թուրքական կողմը մնաց անզիջում և պնդում էր պահպանել Մոսկվայի պայմանագրի հոդվածները;**Մոսկվայի և Կարսի պայմանագրերը փաստորեն խորհրդային Ռուսաստանի հերթական հարվածն էին Հայկական հարցին, ավելին թուրքիայի հետ նրա դաշինքի հաստատումը համազոր էր ցեղասպանին հովանավորելուն; Միակ դրականն այն էր** որ 1921թ ապրիլի հեռացան Ալեքսանդրապոլից՝ ավերելով ու թալանելով;

Հայաստանի տարածքային խնդիրները Վրաստանի ու Ադրբեջանի հետ նույնպես լուծվեցին անարդարացի;

- 1921թ հուլիսին Ախալքալակը տրվեց Վրաստանին
- Նախիջևանը Մոսկվայի պայմանագրով տրվեց Ադրբեջանին, որը չէր զիջվելու որևէ մի երրորդ տերության; պարզ է այդ որոշումը ուղղված էր Հայաստանի դեմ.
- Լեռնային Ղարաբաղը 1921թ հուլիսի 5-ի Կովկասյան բյուրոյի որոշումով և Ստալինի միջնորդությամբ թողնվեց Ադրբեջանի կազմում, որպես ինքնավար մարզ, Շուշի կենտրոնով;

Այսպիսով Հայաստանի խորհրդայնացումով Խորհրդային Ռուսաստանը տապալեց հայկական հարցի լուծումը՝ երկար ժամանակ Հայաստանում չարծարծվեց Հայ Դատի, Ազատ Անկախ և Միացյալ Հայաստանի գաղափարը, իսկ 1922թ ԽՍՀՄ-ի կազմավորումով ՀԽՍՀ-ն իր ձևական անկախությունը կորցրեց ; Հայ դատի, պահանջատիրության ու հայկական հարցի պայքարը տեղափոխվեց Սփյուռք;

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ ԼՈՆԴՈՆԻ և ԼՈԶԱՆԻ ԿՈՆՖԵՐԱՆՍՆԵՐՈՒՄ 1921-1923ԹԹ

Սփյուռքի գոյության 1-ին տարիներին աշխարհի տարբեր երկրներում ապաստանած հայերը հետևում էին միջազգային ատյաններում հայկական հարցի քննարկումներին; Եթե Մոսկվայի պայմանագրով Խորհրդային Ռուսաստանը քեմալական թուրքիային զիջեց հայկական տարածքները ու հարված հասցրեց հայկական հարցին, ապա Լոնդոնի և Լոզանի կոնֆերանսները վերջնականապես տապալեցին հայկական հարցը;

Լոնդոնի կոնֆերանսը կայացավ 1921թ թեետրվար-մարտ ամիսներին, որտեղ քննարկման դրվեց Սևրի պայմանագրի վերանայման հարցը; Լոնդոն էին ժամանել երկու հայկական պատվիրակություն և պահանջում էին Արևմտյան Հայաստանի նկատմամբ կենսագործել Սևրի պայմանագիրը, իսկ Կիլիկիայում ստեղծել ինքնավարություն; Սևրի մերժումից հետո **առաջ քաշվեց Թուրքիայի արևելյան նահանգներում <<հայկական ազգային օջախ>> ստեղծելու խնդիրը, որը սակայն Թուրքիային ոչինչ չէր պարտավորեցնում;**

1922-23թթ կայացած Լոզանի միջազգային կոնֆերանսը նվիրված էր Մերձավոր Արևելքի հարցերի քննարկմանը; Ընդունված փաստաթղթերից էր Թուրքիայի հետ դաշնակից երկրների հաշտության պայմանագիրը, որը ներկայացնում էր Թուրքիայի ժամանակակից սահմանները; Այդ նշանակում էր որ վերջ էր դրվում Սևրի պայմանագրին և արևմտյան տերությունների կողմից Հայկական հարցի ճանաչմանը; Լոզանում էին կրկին հայկական երկու պատվիրակություն; Լոզանում խոսք էր գնում Թուրքիայի տարածքում հայ գաղթականներին կենտրոնացնելու և <<ազգային օջախ>> ստեղծելու մասին; որը սակայն մերժվեց;

Այսպիսով Անգլիայի , Ֆրանսիայի և խորհրդային Ռուսաստանի վարած քաղաքականությամբ տապալվեց հայկական հարցը ի հաշիվ քեմալական Թուրքիայի; Լոզանի կոնֆերանսում Խորհրդային միությունը պաշտպանեց Թուրքիայի շահերը;

Հայկական հարցը Սևրի պայմանագրից՝ ՄԻԱՅՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻՑ դարձավ *գաղթականների հարց*: Լոզանի պայմանագրերում Հայաստանը և հայերը այլևս չէին հիշատակվում; Հայկական հարցի փոխարեն առաջ քաշվեց հայ գաղթականների հարց , այն հանձնելով Ազգերի Լիգայի տնօրինությանը ;

Քեմալական թուրքիայի ջանքերով և մեծ տերությունների կողմից Հայկական հարցի տապալումից հետո գործնական նշանակություն ստացավ հայ գաղթականներին տեղավորելու խնդիրը; Թուրքիան խստորեն մերժեց իր երկրում / արևելաանատոլիական մասում/ <<հայկական ազգային օջախ >> կազմակերպելու խնդիրը; Ճիշտ է ազգային օջախի ստեղծումը հայկական հարցի հետ նույնական չէր, բայց կունենար դրական նշանակություն; Ցեղասպանության ենթարկված ու հայրենազրկված , արևմտահայությանը համախմբելու իր հայրենիքում, և ունենալ հետագա պայքարի հեռանկար; Շատ էր խոսվում գաղթականների օգնելու մասին սակայն գործնականում ոչինչ չէր արվում; Մեծ տերությունների անտարբեր

վերաբերմունքի քննադատությամբ հանդես եկավ մեծ մարդասեր ու հումանիստ Ազգերի Լիգայի ներկայացուցիչ Նորվեգացի բևեռախույզ Ֆրիտյոֆ Նանսենը իր <<Խաբված ժողովուրդ>> գրքով; Նանսենի աշխատանքով հայ գաղթականները հայրենազուրկ հայտարարվեցին, դա որոշ արտոնություններ էր տալիս նրանց միջազգային տեղափոխությունը դյուրացնելու համար; Նրանց տրվեց հատուկ անցագիր, որը <<Նանսենյան անձնագիր >> կոչվեց; 1925թ Նանսենի ղեկավարած Ազգերի Լիգայի հանձնախումբը եկավ Հայաստան Սարդարապատի դաշտի ոռոգման հնարավորությունները ուսումնասիրելու և դրամական միջոցներ հավաքելու համար; Նախատեսված էր 50 հազ. գաղթականների տեղավորման խնդիրը, սակայն այս ջանքերն էլ ապարդյուն անցան և սպասված արդյունք չտվեցին;

ՊՈՏՍԴԱՄԻ ԿՈՆՖԵՐԱՆՍԸ-- 1945Թ հուլիսին տեղի ունեցավ տեղի ունեցավ Պոտսդամի կոնֆերանսը, որտեղ եթե Ստալինյան կառավարությունը պնդեր ու հետևողական գտնվեր Թուրքիայից հայկական տարածքների վերադարձ հարցը կլուծվեր/ Կարս Արդահան/; Սակայն ավելի շատ շահարկվում էր Հայկական հարցը՝ ներգաղթ կազմակերպելու և հայկական նահանգների վերադարձի խնդիրը քան կատարվում էին քայլեր: Իսկ արդեն 1953 թ.-ի մայիսին ԽՍՀՄ-ը պաշտոնապես հայտարարեց, որ Թուրքիայից տարածքային պահանջներ չունի:

1960-ական թթ. Հայաստանում սկսվեց ազգային զարթոնք: Խորհրդայնացումից հետո հայ դատի միակ պահանջատերը մնացել էր սփյուռքը, որը հետզհետե վերածվում էր հայ դատը հետապնդող քաղաքական ուժի: Հայ դատի հանձնախումբը հարատև աշխատանք էր տանում ՄԱԿ-ի կառույցներում և այլ միջազգային կազմակերպություններում հայ դատի լուծման համար: 1980-ական թթ. նշանավորվեցին մի շարք միջազգային կազմակերպությունների կողմից **(ՄԱԿ, ԵԽ, ԵՀԽ,)** հայոց ցեղասպանությունը դատապարտող բանաձևերի ընդունմամբ, որը վճռորոշ քայլ էր հայկական հարցի լուծման ճանապարհին:

1988 թ.-ից վերսկսված Արցախյան շարժումը նոր բովանդակություն բերեց հայկական հարցին՝ դառնալով մեկնակետը հայկական հարցի արդի փուլի: 1991թ.-ին Հայաստանի անկախության հռչակումից հետո հայ դատի համար պայքարը հայտարարվել է պետական քաղաքականություն: Հայկական հարցի լուծման ճանապարհին կատարվող առաջին քայլը ցեղասպանության միջազգային ճանաչմանը հասնելն է, ոճրի դատապարտումը, նյութական և հոգային հատուցումը: Վերջնականը ազատ, անկախ և միացյալ Հայաստանի ստեղծումն է, որն առ այսօր մնում է հեռավոր նպատակ:

Ե Զ Ր Ա Կ Ա Յ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Ուսումնասիրելով Հայկական հարց թեման ,/ որն կազմում էր Արևելյան հարցի բաղկացուցիչ մասը 19-րդ դարի 2-րդ կեսին/, հանգել են այն եզրակացության որ Հայկական հարցը աղերսվում է միջազգային- քաղաքական բարդ իրավիճակին ու ընկղմվում է խոշոր տերությունների միջպետական հակասությունների մեջ, ու լուծում չի ստանում; Կամ էլ ստանում է այնպիսի լուծումներ որ վնասում է Հայաստանի ու հայ ժողովրդի շահերին, տալով տարածքային ու մարդկային կորուստներ;

<u>Գրեթե միշտ Հայկական հարցը լուծվում էր միայն թղթի վրա:</u>

Աշխատության մեջ փորձել եմ միջազգային քաղաքականության բարդ կծիկի մեջ վեր հանել հայկական հարցը, որի լուծումը տապալվեց թուրքական պետության իրականացրած զավթումների , ցեղասպանության ու խարդավանքների մեջ, խճճվեց արևմտաեվրոպական խոշոր տերությունների ու Ռուսաստանի դիվանագիտական փոխհարաբերություններում , մտավ միջպետական մրցակցության ու հակասությունների ոստայն և առ այսօր լուծում չի ստանում: Հայոց պահանջատիրության ու հայ դատի պայքարը դեռ շարունակվում է արդեն 100 տարի և ավելի: :

Անհիմն են ժամանակին արված այն հայտարարությունները, թե Լոզանում թաղվեց հայկական հարցը: Այսօր հայկական հարցի պահանջատերերն են Հայաստանի նորանկախ Հանրապետությունը, բազմամիլիոնանոց հայկական սփյուռքը, որոնք փորձում են միջազգային հանրության աջակցությամբ հասնել հարցի արդարացի լուծմանը միջազգային իրավունքի շրջանակներում:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. ՋՈՆ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ - << Բուրժուական դիվանագիտությունը և Հայաստանը>>

Երևան -19

2. ԼԵՆԴՐՈՒՇ ԽՈՒՐՇՈՒԴՅԱՆ - << Հայկական հարց>>

Երևան -1995թ.

3. ՌՈՒԲԻՆԱ ՓԻՐՈՒՄՅԱՆ - <<Հայկական հարցի պատմություն>>

Երևան -2002թ.

4. ՎԱՐԴԱՆ ՊԱՐՍԱՄՅԱՆ - <<Հայ ժողովրդի պատմություն>>

Երևան –1979թ.

5. << ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ >> - ԳԱ բազմահատորյակ հտ 6 -րդ

6. ՆԻԿՈՂԱՅՈՍ ԱԴՈՆՑ - «Հայկական հարցի լուծման շուրջ»

7. ԼԵՈ - «Հայկական հարցի վավերագրերը»